

Գ Ա Ր Զ Ե Ա Ն

« Կարծիք » եւ « Կեղծիք »

Բազմամէկի Սեպ. — Հոկ. Թւոյն մէջ, Ուսուցչապետ Պիտերսընի « Հայ. և Դրա-ցի Լեզուները » գործոյն վրայ մի գրախոսականի առթիւ, ասուած էր թէ « Կեղծիք և Կարծիք միեւնոյն բառին պարզապէս երկու ձեւերն են ». և Դեկ. Ի Թւոյն մէջ Ռժ. Մ. Ս. Գարրիէլեան հաստատած էր թէ « այդ երկու բառերը իմաստով իրարու հակառակ են և կազմով այլևայլ »:


Լինելով նոյն կարծիքից, թոյլ տուէք երկտողիս ասելացունել թէ այդ երկու բայերի, օտար լեզուաց մէջ գտնուող, արմատակիցներն եւս ցոյց տալիս են որ նրանք բոլորովին անջատ բառեր են ու « իմաստով իրարու հակառակ »:

Նկատելով որ Ղ և Լ լծորդ են, ինչպէս նաեւ Վ (կամ Փ) ու Կ, Կեղծի արմատակից կը գտնենք հետեւեալ օտար բառերն — ար. վիւս (وإس), կալէս. (Wales) Fals, դան. Valsch, գերմ. Falsch, անգլ. և շեւտ. False, Լատ. Falsus, ֆր. Faux, Լին. : Այս բառերի և ո՛չ մին կարծիքի նշանակութիւն կտայ. ու այդ լեզուների մէջ կարծելի համանուն բայերն վերոյշիշալ բառերին բնաւ արմատակից չեն :

Իսկ կարծեալ ար. է խարս (خرس). կայ նաեւ ար. ֆարզ (فرض). և եթէ այս երեք բառերի մէջ ր թարմատար է (կամ ր-ի լծորդ) այն ժամանակ յարգելի բժշկապետի ասածն թէ կարծել և կասկածի արմատակից են, հաւանական կը լինի Բայց կասկած—ի ար. է վասվաս (وإس) որի թ. է Փէսֆէս (فئس) :

Իւր Sincerus—ի ստուգաբանութիւնն թէև ուշիմ, բայց ինձ թւում է մի քիչ կեղակարծ : Սակայն շատ ճիշտ է թէ կեղծիք և Կարծիք արմատակից են և Պատեան ու պարսկերէն հետ համանուն : Կեղծի—ի ար. է զեւաֆ (علاف) որ նշանակէ նաեւ սուրի պատեան :

Գ Ր Ա Կ Ա Ն Մ Ա Մ ՈՒ Լ



Լեւոն Մելիք — ԱՊՐԱՄԵԱՆՑ . — « Իմ պատասխանը քարոյապետ ընկած և ամենքից արհամարհուածին ». — Թիֆլիզ. Տպ. Օր. Ն. Աղսեան 1907 :

Սով Հայաստանի մէջ, սով և Գրակահուսթեան մէջ, Եւ չեմ գիտեր ինչ բարեխոսութեամբ երկու ուսուցչաց ղէմքեր փանֆլէներ կը հրատարակեն, լուսանական վերաւորանքներ, ճղճիմ խնդիրներ շաղակրատորէն պարզելու նպատակով :

Պ. Լեւոն Մելիք — Աղսեանց 276 էջ հատորով մը կը պատասխանէ Պ. Սարգիս Բամալեանցի փանֆլէին : Ժամանակին երկուքն ալ իրրեւ աշակերտ, դասատու և դաստիարակ իրարու հետ յարաբերութիւն ունեցեր են : Չարմանալի է սակայն, թէ ինչո՞ւ այնքան ահեղագոռ յստաջարան մը իր ընթերցողներուն. միթէ Պ. Աղսեանց իր ընթերցողներուն հետ ալ կարգադրելի հաշիւ մ'ունի : Եւ Չարմանալի է դարձեալ Պ. Աղսեանց՝ որ իր առջեւ կը ստեղծէ անձնաւորութիւն մը՝ որուն մարդ անունը տալ կը զլանայ իսկ, և սակայն աւելորդ ժամավաճառութիւն չի համարիր ըմբռնել 276 տպագրական էջեր, որոնց առանց զրամի չեն ըլլար. և այդ էջերը կարող էին աւելի լաւ ծառայութիւն մ'ընել մեր այժմեան սոված գրականութեան : Դուք Պ. Աղսեանց՝ եթէ կատարելիք զուտ ինքնակենսագրութիւն, պիտի գովէինք ձեր աշխատութիւնը, վասն զի մեր վարժարանական պատմութեան շէնքին մէկ կոփածոյ քարը զետեղած պիտի ըլլայիք : Ինչու արդարանալու չեմ գտնիր հանդէպ ձեր անձնանկարիութեան՝ սպերախտութիւն գտնելիս, բայց ինչո՞ւ այդքան վրդովիւ չէ՞ որ առաջին հարուածը՝ առաջին բարեկամէն կը ստացուի : Եւ ներքեցէ որ դիտել տամ ձեզի հրապարակաւ, որ զուք ձեր ընթերցողները իրաւունք չունին ստաղակացրնելու հայհոյանքներու բանակներ շա...

ըրևով այդ հատորին մէջ, թէեւ նպատակ-
նիդ հարուածել է ձեր ակոյեաննը: Բայց
գուց տղմով ուզեր էք աղտոտել ձեր ոսո-
խը, և ձեր ձեռքը՝ մաքուր չէ մնացած: Եւ
այսքան տո՛ղ. վասն զի խնդրեր էիք:

*

ԷՄԻՆ. — «Ըմբոստ երգեր», — Թիֆ-
լիս. Օր. Ն. Աղանեանի. 1907.

Երգը սրտին և զգացմունքին ամենէն
ազնիւ դաստիարակն է զբարեչ: Երանի
անո՛ր որ դաշնակի առջեւ մատուրներու
խոռվըողը հոգեղոյ մէջ կը թափէ խա-
ղաղութեան արջալոյս: Նուազածուներ շատ,
գիւթողները քիչ, ու բանաստեղծներ շատ,
սակայն ստեղծագործող տաղանդներ քիչ:
Առ հասարակ գրեթէ ամէն հայ գրիչ՝
զրականութեան առաջին քայլերուն, Ա-
պողոնի սրինգին ուզած է ձեռք կարկա-
ռել, և յուսախար՝ որքան քնարներ փրչ-
րուեր են: Ընդհանուրին մէկ շիթը կը խը-
տացընեն « Ըմբոստ երգերը » Էմիլի: Եւ
քանի որ ըմբոստ է, իրմէ քնարին հրա-
պոյրը չենք պահանջեր, այլ գաղափարի
կրակը:

Վա՛ռ է այդ կրակը: Եւ կարելի՞ է մա-
րած կրակ. բայց ինչ է Շիրվանզադէի
«կրակը»: Լարուած են Էմիլի քնարին
լարերը: Ու երգին ձայնը գոյն կը դառ-
նայ երեսնն, վրձինին պայշտօնը կանտո-
ցին կ'անցնի. ու երգը՝ կ'ուրուագծէ:
«Ընկածներին» պատկերը՝ դիակներու առ-
բոխակոյտն է: Անոնք ազատութեան զի-
նուորները Էմիլի հիացումին ցօղով կ'օ-
ծուին. «Նա՛ կ'ապրի միայն, ով՞ զո՛հ կտայ
շատ»... Եւ սպրեւելու համար, ուրեմն թե
թեի տուած, պէտք է կոռուի, քաջարար
իյնալ կոռուի դաշտին վրայ: Անտառն ալ
կը կոչէ. ու այդ ձայնը որքան անոյշ է
ըմբոստ աշխատաւորին համար: Պատկերը
մոնչող է, փոթորիկը պայթած. աշխա-
րանք, սուգ, մահուան արհաւիրք: Տա-
րազրեալ ազատ մտքերը, հեռուէն կը գոր-
ծեն. յաղթական ձայնով նոր սերունդը
դէպ թ վրէժ կը ձայնէ: Բայց հաւածոյ
փոթորիկը... Նսք սերունդը բարձա՛ ան-

կէ ընկճուելու ալ երկիւղ չունի — Նադ-
սոնի «Յառաջ»ը մեզ յիշել կու տայ գե-
ղեցիկ փնջակի մէջ՝ խայտաճամուկ թի-
թեանիկի հրապոյրը: Նադսոն իր քնարով
կ'արծարծէ խրոխտ երիտասարդին ոսկե-
վառ յոյսերը. ամբոխը կրնայ իր դատաս-
տանին մէջ սխալ վճիռներ կարգալ, «Գնա՛
քո շաղով, դու մի՛ վհատիր». և կեանքի
փոթորիկն՝ դեռաստի կուրծքը, պէտք է դի-
մադրէ, այդ է քաջութիւն, այդ է ըմբոս-
տին պարտքը: Եւ Բանուորը՝ քնարի ռում-
բով՝ կը պարզէ յաղթանակի դրօշը: Էմիլ
հիասթափած է:

«Գէ՛հ յետ նաչանջէ՛ք, բանւորն է գալիս:
Ճանապարհ տւէ՛ք, զրկւածն է գալիս:
Ա՛յժմ նրանն է ոյժ և իրաւունք,
Գէ՛հ ծունկ չորցցէ՛ք հսկան է գալիս»:

Եւ այդ ցոյց կու տայ, որ Ընկերվա-
րական ուժը վեհապետ է դարձած, անոր
է հիմայ արքայական փառքը, և կոսպաշ-
տական երկրպագութիւնը. և ծունկ չորց-
լու է... հսկան — զրկուած ուժը կ'անցնի՛:

Բանուորի երբ յոյսերով արդէն յաղ-
թանակած գոռ բարկաճայթ կ'որոտայ .
թող մահը սպառնայ. «կորչի՛ թնութիւն,
կեցցէ՛ յաղթութիւն»: Եւ ինչ սարսափ է
այդ «Արթնացած կեանքը». հասարակա-
կան իրաւունքի ուժը ըմբոստացած է,
անզուսպ, հպարտ, ալ չաղերսեր, այլ կը
պահանջէ. «Յետ տո՛ր իմ զրկանք, իմ
թանգ կորուստներ», անոր ընթացքը յաղ-
թական է, իր առջեւ ո՛վ կարող է չի
խոնարհիլ, զիմաղրողը անիւներուն տակ
ջախախտուած է: Ա՛հեղ ուժ, Բայց... դեռ
յոյս: Ու բանաստեղծութիւնը կ'ուզէ ու-
րուագրել մարտիրոսացումը ճշմարտու-
թեան: Բայց կարելի՞ է որ ճշմարտութիւնը
ոտնակոխ ըլլայ: Ապականուած դար մը
կարող է ամէն սրբութիւն յօշոտել. և
ճշմարտութեան ընկճումը այդ դժնեայ դա-
րուն կը պարտէր:

Պ. Էմիլ ուզած է քերթել, երգել, բայց
ոչ քերթող է, ոչ նուազող: Բացարձա-
կօրէն զուրկ է Պառնասական շնորհքէ: Իր
մէջ ըմբոստութեան կրակը արծարծուն է,
ու այդ կրակը ձմիտ մտքերու համար կա-

ընտր է: Իր գաղափարները ճակատաբայ կը քարոզեն ռամկավարութիւն, բանուտրական հարցի պաշտպանութիւն: Ուրեմն, ... կուսակցական Երզնէր ալ: Ի՞նչ շտապ քայլեր . . .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԱՆ. — «Խօսք» — Վոյրէի մէկ արարածով. երկ. տպ. բարեփոխած. Թիֆլիս. Տպ. Չմօրս 1907. — Սարսափի երգիծանքը, այդ փոքրիկ հատորին մէջ՝ մեր ուշադրութիւնը կ'ուզէ զբաւել: Բայց կը թողում որ հեղինակը իր առսահայոց համակրանքը և ուշադրութիւնը սաղասուրէն գրաւէ: Չեմ գիտեր, կարելի՞ է որ Պ. Թումանեան թրքահայոց ծիծաղը կարենայ շարժել իր միկրոներով և անհղախորխտ ճանճերով: Ըրծաղի, երգիծանքի շնորհքը՝ Պարոնեանի կամառէն ղեռ թուսաստան մեր եղբայրներուն չէ հասած:

*

ԳԻՒԳՈՐ ՈՍԿԵԱՆ. բրգմ. Լորտ էյվպիտի «Կեանքի գործածութիւնը». — Կ. Պոլիս. Տպ. Յ. Մատրեոսեան 1908. — Մինք գիտենք գործածել մեր կեանքը. բայց ո՞ւր է այդ կեանքը, Լորտ էյվպիտի ըմբռնած կեանքը որքան որ մեզմէ ղեռ շտա հեռու է, սակայն բանտուած կեանքին ալ բարոյական ղեղահատները միշտ կազդուրիչ են: Ամէն պարագային, հոգին կրթող և կերակրող խրատականները՝ մեզի միշտ օգտակար են: Գրիգոր Էֆ. Ոսկեան՝ ազնիւ ծառայութիւն մը յանձն է առած՝ թարգմանելով էյվպիտի այդ գործը՝ ուր կը գտնուի հեղինակին և հեղինակներու սիրուն մտքերը, հայը հոն մաս չունի, վասն զի այդ երբազուած կեանքէն արտաքուստ է հայուն մարմինը, հայուն միտքը: Ե՛րբ միջազգային ծովին մէջ շիթ մը հանձար պիտի կայլակենք:

Եւրոպայի մեղուները ղեռ մեր ծաղիկներուն չայցելեցին, և գուցէ անոնք անծանօթ են մեր Արարտեան դաշտի բուրաստանին: Բայց օրին մէկը, կը սարվին մեր զբականութեան ճամբան, և եթէ կոնս

փուկիտս մը չունինք սակայն Եզնիկ մը, ու փուշակ մ'ունինք Հիւկոյին տեղ: Հիմայ սակայն ի՞նչ փոյթ թէ մտքի խրատը ուսկից կու գայ, հարազատ կամ անհարազատ աղբիւրը խնդիր չէ. հանձարները ընդհանուր մարդկութեան կը պատկանին, յատուկ ցեղի մը մենանորհ չեն:

Կը խորհինք, թէ ինչպէս մեր ցեղը կարող ենք յեղաշրջել, ազնուացնել և ապահովցնել մեր կեանքի պայմանները: Վաստէ կ'լլել, կրակ փչել, բայց մտքի մարզանքն ալ մտունդի պէտք ունի, և ստնտուն՝ հանձարներու բարոյախօսութիւնն է: Լորտ էյվպիտի խրատները ցուկալի է որ հայ թարգմանութեան էջերէն փոխադրուին և դրոշմուին անխտր սամէն սրտի մէջ: Ազնուական բարքը, հոգեբանական առաքինութիւնները՝ են այն ամենուն համար, որ մարդկային դասակարգէն չեն ուզեր դուրս մնալ: Չի փնտոնէք այդ խրատներուն մէջ թրթրողական հիացում, ըստ իս խրատները սիրելու ենք և արտասանելու ենք՝ իրբու ողջմտութեան սաղմոսներ մեր մարմնատր տաճարին: Չեմ գիտեր, մեր մէջ արդեօք ընթերցանութիւնը ուժեղ քայլերով կ'ընթանայ. յատաշարէմ լուսաւորեալ մշակուած միտք մը, միշտ ընթերցանութեան երախտագէտ կը մնայ: Չգլխիչ են վէպերը, սակայն անոնք շտա անգամ երեսակայութեան քնար են միայն, հոգին ալ երգի պէտք ունի, ու անոր սազին թելիքը հանձարներու խրատական մտքերը կը կազմեն. կարդանք ողջամիտ հանձարները, բարոյական նին երգը շուտով կը հոսի մեր հոգեւոյն մէջ: էյվպիտի գիրքը, խրատականի խումբերգ մ'է, — անոր նուազը մեր վշտերուն սփոփանք է, վհատութեան՝ արիութիւն, վրէժխնդրութեան՝ ներողամտութիւն: Ահա մէկ քանի օրինակ.

«Մենք կասկածներով, երկիւղներով, հոգերով և նեղութիւններով զմեզ կը չարչարենք»:

«Ճշմարիտ գերութիւնը՝ մուլութիւնն է»:
«Աճնուրացութեան մէջ աւելի երջան»:

կութիւն կայ քան թէ անձնասիրութեան մէջ»:

«Ներողամիտ եղէք ուրիշներուն համար, բայց ձեր անձին համար ո՛չ երբեք»:

«Կեանքի մէջ յաջողելու համար, փափուկանկատութիւնն աւելի անհրաժեշտ է քան թէ տաղանդը»:

«Մէկու մը հանոյք պատճառելու առիթ մը բնաւ մի՛ փախցնէք»:

«Մարդոց սիրտը շահեցէք, կ'ըսէր Լորտ Պրլայ, առ Եղիսարեթ թագուհին, և առ նոնց սրտին հետ քսակն ալ միեւնոյն ժամանակ պիտի շահնիք»:

«Թշնամի մի՛ վաստկիր. վաստակներու ամենէն գէշն է այն»:

«Միշտ աշխատելով, բնաւ չգրօնելով, կ'ըսէ անգլիական առածը, տղայ մը յիմար կը դառնայ»:

«Չուրն երբեք ոճիր չէ գործած, բայց ալզօլին համար կրնայ ըսուիլ թէ շիշերու մէջ պահուած ոճիր է: «Ուր որ Սատանան չկրնար անձամբ երթալ, կ'ըսէ հրէական հին առած մը, գինին կը խըրկէ»:

«Գիտութիւնը կը հպարտանայ՝ թէ շատ բան գիտէ.

«Իմաստութիւնը կը խոնարհի թէ աւելի շատ բան չգիտեր» (Գոուբըր):

«Երբեմն շատ բան սորված անձինքն են որ գիտեն թէ ո՛րքան քիչ է իրենց գիտցածը»:

«Նոյն իսկ բախտին ամէն շնորհները վայելած շատ մարդիկ խոստովանած են թէ իրենց ամենէն մեծ երջանկութիւնն ընթերցման մէջ գտած են»:

«Մարդիկ իրենց սիրած անձերուն կը փնասեն չափազանց ներողամտութեամբ, անոնց թերութեանց վրայ աչք գոցելով, և երբեմն մանաւանդ զանոնք քաջալերելով: Իսկ երբ որ մէկը կ'ատեն, իրենք իրենց կը փնասեն, կիրքէ և չափազանց զայրոյթէ յափշտակուելով» (Չէսթըրֆիլս):

«Որ և իցէ քննադատութեան միջոցին մի՛ բարկանար, և բարկութեան միջոցին մի՛ քննադատեր»:

«Գնդերային մարզանքը մարմնական

զօրութիւն կը պարգեւէ, և ուղեղային մարզանքը մտային խաղաղութիւն»:

«Անոնք որ ուրիշներուն չեն ներեր, չեն կրնար ուրիշներէն ներում յուսալ»:

«Եթէ ո՛ր և է բարձր պաշտօնի մը վրայ էք, խղճմտօրէն արդարասէր եղէք և քաղաքավար»:

«Քայց գեղեցիկը գնահատելու համար, պէտք է գեղեցկութեան զգացումն ունենալ»:

«Առանց սիրոյ, զթութեան և հոգւոյ խաղաղութեան, թերեւս կարենաք մեծ և կարող ըլլալ, բայց չէք կրնար երջանիկ ըլլալ»:

«Ճատ ազնիւ զգացումներ յայտնուած են Պդատոնի, Արիստոտէլի, Եպիկտետոսի, Սենեկայի և Մարկոս-Աւրելիոսի մէջ, բայց չկայ սիրոյ աւետարան մը նման այն աւետարանին՝ զոր Նոր Կտակարանը կը պարունակէ»:

«Կրօնքն հանգստութիւն և հանդարտութիւն կը խոստանայ միզ, հոգւոյ և մտքի խաղաղութիւն, և վշտի մէջ մխիթարութիւն, նոյն իսկ այս աշխարհի մէջ»:

Կարգալով 174 էջերը Լորտ Էյվպիւրի, քաղոցէս այսքանը նմոյշ մը ընդունեցէք, գրախօսականին էջերը միշտ ժլատ կը մնան: Արթուր Կրաֆ՝ Թորինտի համալսարանի գրականութեան վարժապետը, նման գիրք մը հրատարակած է. այդ նշանաւոր իտալ բանաստեղծը ցանկացեր է որ իր շատ մը հրատարակութիւններէն՝ նուազ անշահեկանը ըլլայ իր խրատական գիրքը, զոր իր աշակերտաց կը նուիրէ: Ու մենք ալ հիմայ Էյվպիւրի այս հատորը կը յանձնարարենք մեր պատանիներուն, որոնք տարիքին բերմամբ, միամիտ սնապարծութեամբ շատ բարձրէն կը դիտեն խրատական գրքերը. խոհական երիտասարդը՝ կ'ամբարէ իր ծերութեան համար երջանկութիւն. ու խոհական ըլլալու համար պէտք է սիրել մեծ հանճարներու փորձառական խրատները և գործադրել: Ու երիտասարդին հետ այդ գիրքը ամէն հասակի մարդ կարող է կարգաւ. մինչեւ մահ սորվելու ենք. ամէն բանէ վեր սոր-

վելու նիւթը կեանքի գործածութեան գիրքն է. այդ գիրքը դաստիարակ և աշակերտ, հայր և որդի, առաջնորդ ու ժողովուրդ իրենց ձեռքէն պէտք չեն վար թողուլ :

Իրուսաղէմի պատուարժան միաբան Սամուէլեան վարդապետ՝ հատորի մը մէջ հաւաքած էր հին և նոր տաղանդաւոր հեղինակներու հանճարեղ խօսքերը, չորս տարի առաջ զանոնք հրատարակեց. մտքերու ծաղկաբազ մ'էր այն, սիրուն, շահեկան, մենք զայն սիրով ողջունեցինք, հիմայ անոր կ'ընկերանայ այս հատորը՝ աւելի ճառական, նպատակը նոյն է → մտքի և հոգեոյ ազնուական դաստիարակ ըլլալ :

Թարգմանիչը Գրիգոր Էֆ. Ոսկեան՝ մատչելի մաքուր աշխարհաբարով կը ներկայանայ, և իր լեզուն կը յիշեցնէ Հ. Գարբիէլ Այվազովսկի սրբազանին սիրուն աշխարհաբարը : Եւ այս հրատարակութեամբ՝ Չարդարեան Եղբարը կը ճոխացնեն շարքը իրենց ընտիր հրատարակութեանց : Վերջապէս Կ. Պոլսոյ մամուլն ալ կը սկսի շարժիլ և արդէն ժամանակէ մը ի վեր գովելի զարթնում մը կը նկատեմ մեր թրքահայ մտաւորականներու վրայ :

*

Noël Dolens et A. Khatch. — «Histoire des Anciens Arméniens». Genève 1907. — Վերջապէս մեր ազգային պատմութիւնն ալ սկսաւ լրջանալ, լաւ էր սակայն նախ հայերէն, յետոյ ֆրանսերէն տեսնել այդ ոճով պատմութիւն մը : Հեղինակները 226 էջերու մէջ ամփոփած են մեր ազգային հին պատմութեան մէկ մասը : Պատմութիւնը գրեթէ միշտ խմբագրութիւն մըն է. Հ. Չամչեանէն վերջը, Հ. Գաթրճեան, Քարաբաշեան, Ս. Պալասանեան և Կ. Վ. Շահնազարեան տարբեր ոճով հրատարակեցին մեր պատմութիւնը. իսկ գերամանական լուրջ ուսումնասիրութեամբ առաջինն կրնանք համարել ներկայ հրատարակութիւնը : Պատմական ոճը չէ՛ հոգին այդ հատորին,

այլ անողորմ քննադատական ոճը : Այն օրէն որ եւրոպացի հայագէտ բանասէրներու դասակարգը լրջօրէն քննութեան ենթարկեց մեր պատմութիւնը, տեսանք մեր հսկայախորիտ առասպելական յուշարձաններու սասանումը : Մեր բանասիրական թերթերը օգնեցին ազգային պատմութեան զտումին : Քսան տարուան մէջ, մեր բանասէրները մեծ զարկ տուին պատրաստեցին ատաղձը մեր քննական պատմութեան, և հիմայ այս հատորով շէնքը բաւական բարձրացած կը գտնենք :

Մասնազէտ հեղինակները հոն նորու թիւն պիտի չի գտնեն, այլ խտացում մը պատմական լուրջ տեսութեանց :

Այսպիսի գործ մը կը պահանջէր խնամքով երկար ներածութիւն մը, կոկիկ ցանկեր նիւթոց, աշխարհագրական և կենսագրական անուանց, և կը պակսին առոնք : Սակայն այս ամենը երկրորդական թերութիւններ են : Առաւելութիւնները շատ են. ակն յայտնի կ'երեւի թէ հեղինակները շատ բարեխիղճ բժայիներութեամբ խմբագրած են այս պատմական գործը, գերադասելով միշտ գերմանական բեմը քննադատական :

Եւ որքան ալ պատմական լուրջ գործերու ձեռնարկով, սակայն տակաւին հայոց պատմութեան դասագիրք մը չունինք, սրբագրուած գործ մը, հին առասպելական պարեգօտը հանած :

Վեննայի մեր յարգ. վերապատուելիներէն Գեբ. Հ. Յակոբոս Վ. Տաշեան տարիներէ ի վեր, մեր Հայոց հին պատմութեան և զրականութեան վերաբերեալ հրակայ գործի մը ձեռք զարնելը իմացած ենք, և արդէն վաղուց տպագրութիւնը սկսած է. այդ եւս մեր քննական պատմութեան հիմնաքարերէն մէկը կրնանք համարել, քանի որ արդէն հեղինակութիւն մ'է զայն քննասիրողը. կը ցաւինք որ տաղանդաւոր բանասէրը այժմ կարող չէ առաջ վարել այդ հոյակապ գործը. ֆիզիզապէս խոնջ վիճակը ալ զգեւք է մեծ վատասկաւորին : Անդին Կովկասի Մամուլէն լոյս կը տեսնեն մեր պատմիչները սրբագրուած . կը

Տալ ըննական ընդհանուր և ընդարձակ Հայոց պատմութիւն մը կազմել, հեղինակները կրնան ըլլալ բանասիրաց յանձնաժողովի մը անդամները : Չանտեսել Տ. Նորայր Բիւզանդացոյ մեծ աշակցութիւնը : Ե .



Մ Ի Ի Թ Ա Ր Զ Ե Ր Ա Յ Ի

Տասուերկուերորդ դարու անուանի բըժշկապետէն մեզի հասած միակ գործը , Ջերմանց միփրարութիւնը վերջապէս իր լաւագոյն ուսումնասիրողը կը գտնէ , Էռնստ Սայտըլի անձին մէջ : Քիչ տարի յառաջ Յ . Քարաւտ Մմբատ Գունդատապլի դատաստանագիրը կը հրատարակէր , հիմայ նոյն անմըցելի ձեռնհասութեամբ ուրիշ գերմանացի հայագէտ մը , Սայտըլ , կատարած է Հերացիին թարգմանութիւնը վենետիկի հրատարակութեան վրայ ¹ :

Համառոտ յառաջարանին կը յաջորդէ բուն քնազրին թարգմանութիւնը որ կը լեցնէ գիրքին մինչեւ 106 էջերը : Ասկից մինչեւ 110 էջը թուարկումն ու համառոտագրութիւնն է այն գրականութեան որ ուղղակի կամ անուղղակի կը նպաստեն Հերացիին հասկնալու : Երկայն ցանկէն կ'իմացուի որ հեղինակս ոչ միայն հայ այլ և օտար աղբիւրներու հետ շատ ծանօթ է : Բնականաբար իր դիտողութիւններն ու լուսարանութիւններն ալ , որ կը լեցնեն 111—277 էջերը , վերաբերմամբ Միփթաւրի բժշկական ու ո՛ր և է դժուարին բաներու ու ասութեանց , շատ ճոխ ու գոհացուցիչ են եղած : Յետոյ կը յաջորդէ հե-

ղինակին կենսագրութիւնը՝ ուր ծանօթ է Սայտըլի թէ Գիրքը Վաստակոցն ալ Հերացիէն թարգմանուած է ² , և գործին վերլուծական ցանկ մը ու աղբիւրներուն ըննութիւնը : Միփթաւրի օտար աղբիւրներէ , արար , յոյն , պարսիկ , ըրած կոչումներուն համեմատական ցուցակը կազմած է , ուր նշանակուած են թէ այն կտորները իրենց հեղինակներու ո՛ր աշխատութեանց մէջ կը գտնուին : Գիրքը կը վերջանայ ցանկերով , գերմաներէն , հայերէն , արար , պարսիկ և թուրք հոմանիշներու , դասական և միջին յունարէն բառերու :

Սայտըլ կը ցուցնէ այս աշխատութեամբ թէ ինք ոչ միայն հայերէնը հիմնովին գիտէ , այլ նաեւ յոյն , պարսիկ , արար ու թուրք լեզուները , որոնք անհրաժեշտ էին կատարեալ ընելու Ջերմանց միփթարութեան ուսումնասիրութիւն մը , ինչպէս ըրած է ինք :



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

Պայրըն , որ հայերէն կը սովորէր Ս . Ղազարու մէջ , երէք ազգեցութիւն մը չկրէ՞ց իր հայական ընթերցումներէն — Պայրըն խօսելով իր իր կայէն ողբերգութեան վրայ՝ ըսած է իր բարեկամ Մէտուինի . «Օր մը մտքէս անցաւ Հայկական Աստուածաշունչիկն հետեւի , և նախանձը դնել իբրեւ պատճառ կայէնի ոճրին , զինքը ներկայացնելով իբրեւ իր քրոշ սիրողը , բայց թէպէտ գծողութեան այսպիսի պատճառ մը աւելի հաւանական կրնար երեւալ՝ զայն մէկզի թողուցի՝ ուղղադաւան վարդապետութիւն շըլալուն համար» : Ընթերցողը կը գուշակեն անշուշտ՝ թէ Հայկական Աստուածաշունչը ուրիշ բան չէ՞ բայց եթէ Անվանք գիրք Հիւսկարանի , հրատարակուած Հ . Սարգիս Յովսէփեանէ՝ ի վենետիկ :

1. Գիրքին գերմաներէն վերնագիրն է Mechithar's des Meisterarntes aus Her «Trost bei Fiebern» nach dem Venediger Drucke vom Jahre 1832 zum ersten Male aus dem Mittelarmenischen übersetzt und erläutert von Dr. med. Ernst Seidel, Leipzig, Verlag von Johann Ambrosius Barth 1908.

2. Տես Բազմամէկ 1906 թիւ 10